



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2016 թվականի

թիվ 97

քաղ. Մոսկվա

Ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը հաստատելու մասին

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականությունն անցկացնելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետի իրականացման նպատակներով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) եւ Եվրասիական տնտեսական Բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 38-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կարգը:

2. Սահմանել, որ ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին փաստաթղթերը, որոնք, Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տրվել են մինչեւ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում պատրաստված ստանդարտ նմուշների նկատմամբ սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրը, գործում են մինչեւ դրանց գործողության ժամկետը դադարելու օրը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Ա. Մամին	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի
թիվ 97 որոշմամբ

ԿԱՐԳ

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման

1. Սույն կարգը մշակվել է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրության 9-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված), սահմանում է ստանդարտ նմուշի տեսակի հաստատման կանոնները եւ տարածվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տարածքներում պատրաստված ստանդարտ նմուշների վրա (այսուհետ, համապատասխանաբար՝ տեսակի հաստատում, անդամ պետություններ):

2. Սույն կարգի նպատակների համար չափումների առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ) ասելով՝ հասկացվում է չափումների այնպիսի մեթոդիկա (մեթոդ), որն անդամ պետությունում միակ իրավաբանական անձի կողմից 1 լրակազմով սարքավորմամբ իրականացվում է ամենաբարձր ճշգրտությամբ, կիրառվում է միեւնույն, այդ թվում՝ հղումային մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) օգտագործմամբ ստացված չափումների արդյունքների ճշտությունը գնահատելու համար, թույլ է տալիս չափումների արդյունքներն ստանալ՝ առանց միեւնույն տեսակի մեծությունների միավորների նկատմամբ չափագիտական հետեւելիության, եւ հաստատված է որպես անդամ պետությունում կիրառվող առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ):

Սույն կարգում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված

քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) սահմանված իմաստներով:

3. Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման (օրենսդրական չափազիտության) ոլորտում կիրառվող ստանդարտ նմուշները պարտադիր կարգով ենթակա են տեսակի հաստատման:

Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման (օրենսդրական չափազիտության) ոլորտից դուրս կիրառվող ստանդարտ նմուշների մասով տեսակի հաստատումն անցկացվում է կամավոր կարգով:

4. Տեսակի հաստատումն անցկացվում է չափումների միասնականության ապահովման ոլորտում պետական իշխանության այն մարմնի կողմից, որը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, լիազորված է (հայտագրված) իրականացնելու այդ գործունեությունը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝ ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) դրական արդյունքների հիման վրա:

Փորձարկումների դրական արդյունքներ ասելով՝ հասկացվում է ստանդարտ նմուշի այնպիսի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) արդյունքներ, որոնք անցկացվում են ստանդարտ նմուշի մշակման տեխնիկական առաջադրանքում (այսուհետ՝ տեխնիկական առաջադրանք) (տեխնիկական պայմաններում) նշված պահանջներին ստանդարտ նմուշի՝ փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) արդյունքում որոշված չափազիտական եւ տեխնիկական բնութագրերի (պարամետրերի) համապատասխանությունը հաստատելու նպատակով:

Ստանդարտ նմուշի փորձարկումները (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումները) անցկացվում են անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը համապատասխան:

5. Տեսակի հաստատումն անցկացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ դրա տարածքում գրանցված՝ ստանդարտ նմուշ պատրաստողներ եւ (կամ) մշակողներ հանդիսացող ցանկացած իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի դիմումի համաձայն (այսուհետ՝ հայտատու):

6. Ստանդարտ նմուշի չափագիտական եւ տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) որոշելու ժամանակ ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) անցկացման ընթացքում օգտագործվում են մեծությունների միավորների այնպիսի չափանմուշներ, չափումների միջոցներ եւ հաստատված տեսակի ստանդարտ նմուշներ, չափումների մեթոդիկաներ (մեթոդներ), որոնց համար ապահովվում է դրանց օգնությամբ ստացվող արդյունքների չափագիտական հետեւելիությունը՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ), ազգային (առաջնային) չափանմուշների եւ (կամ) մեծությունների միավորների միջազգային չափանմուշների կամ չափումների առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների) նկատմամբ:

Ստանդարտ նմուշի չափագիտական եւ տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) արտահայտվում են մեծությունների միավորներով կամ մեծությունների պայմանական սանդղակով (չափումների սանդղակով) գնահատվող մեծությունների պայմանական այն միավորներով, որոնց անվանումն ու նշագիրը համապատասխանում են Միավորների միջազգային համակարգին (ՄՀ) եւ (կամ) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորների այն ցանկին, ներառյալ՝ դրանց հարաբերակցությանը Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) հետ, որոնք հաստատվել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 34 որոշմամբ:

Թույլատրվում է ստանդարտ նմուշների չափագիտական եւ տեխնիկական բնութագրերը (պարամետրերը) նշել այն միջազգային միավորներով, որոնք

վերագրվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության մեծություններին:

7. Լիազորված մարմինը տեսակի հաստատման ժամանակ սույն կարգի 10-րդ կետում նշված՝ ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) արդյունքներով ձեւակերպված փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթերի լրակագմ) հայտատուի կողմից ներկայացվելու օրվանից 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում՝

ա) ուսումնասիրում է փաստաթղթերի լրակագմը սույն կարգի 4-6-րդ կետերին համապատասխանության մասով.

բ) կայացնում է տեսակի հաստատման մասին որոշում.

գ) ձեւակերպում է ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատ՝ թիվ 1 հավելվածի համաձայն սահմանված ձեւով եւ ստանդարտ նմուշի տեսակի նկարագիր՝ թիվ 2 հավելվածի համաձայն սահմանված ձեւով (այսուհետ, համապատասխանաբար՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատ, տեսակի նկարագիր).

դ) սահմանում է տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գործողության ժամկետը (ստանդարտ նմուշի սերիական արտադրության համար՝ 5 տարուց ոչ ավելի, ստանդարտ նմուշի հատային արտադրության համար՝ ստանդարտ նմուշի պիտանիության ժամկետին համարժեք ժամկետ).

ե) կատարում է աշխատանքներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովմանն ուղղված աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան՝ տեսակի հաստատման աշխատանքների արդյունքների ճանաչման նպատակով.

զ) մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տեսակի հաստատման աշխատանքների արդյունքների ճանաչման մասին ծանուցում

ստանալուց հետո տեսակի հաստատման եւ տեսակի հաստատման փոխադարձ ճանաչման մասին տեղեկությունները մուտքագրում է չափումների միասնականության ապահովման ոլորտի տեղեկատվական ֆոնդ՝ իր անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

է) հայտատուին տրամադրում է տեսակի հաստատման մասին սերտիֆիկատ եւ տեսակի նկարագիր:

8. Հայտատուի կողմից փաստաթղթերի լրակազմը չներկայացվելու կամ սույն կարգի 4-6-րդ կետերին դրա անհամապատասխանության դեպքում լիազորված մարմնի կողմից կարող է տեսակի հաստատումը մերժելու մասին որոշում կայացվել: Կայացված որոշման մասին ծանուցումը (հիմնավորմամբ) հանձնվում է հայտատուին կամ ուղարկվում է պատվիրված փոստային առաքանիով՝ հայտատուին հանձնման մասին ծանուցմամբ:

9. Այն դեպքում, երբ անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը համապատասխան մինչեւ տեսակի հաստատումն անցկացվում է փաստաթղթերի լրակազմի չափագիտական փորձաքննություն, այդպիսի չափագիտական փորձաքննության արդյունքները լիազորված մարմնի կողմից հաշվի են առնվում տեսակի հաստատման մասին որոշում կայացնելու ժամանակ:

10. Հայտատուի կողմից լիազորված մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը (նյութերը).

ա) հայտ (նշելով ստանդարտ նմուշի անվանումը, նշանակությունը եւ կիրառության ոլորտը, ստանդարտ նմուշի հետ աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության միջոցները եւ ստանդարտ նմուշի կիրառման համար անհրաժեշտ թույլատրման փաստաթղթերը (առկայության դեպքում), հայտատուի մասին տեղեկությունները (իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության

դեպքում)), ինչպես նաև նշելով անդամ պետությունների կողմից տեսակի հաստատման աշխատանքները ճանաչելու անհրաժեշտությունը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան)։

բ) տեխնիկական առաջադրանք (տեխնիկական պայմաններ)։

գ) ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) ծրագիր։

դ) ստանդարտ նմուշի մշակման վերաբերյալ գիտատեխնիկական հաշվետվություն՝ ստանդարտ նմուշի փորձարկումների ակտի եւ փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) արձանագրության կից ներկայացմամբ։

ե) տեսակի նկարագրի նախագիծ։

զ) ստանդարտ նմուշի անձնագիր։

է) շահագործման փաստաթղթերի լրակազմ (առկայության դեպքում)։

ը) ստանդարտ նմուշի պիտակ։

թ) ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) անցկացման հայտի պատճենը (առկայության դեպքում)։

ժ) ստանդարտ նմուշի մեկ օրինակ եւ (կամ) դրա լուսանկարը։

11. Մինչեւ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գործողության ժամկետը լրանալը ստանդարտ նմուշի չափագիտական եւ տեխնիկական բնութագրերին (պարամետրերին) վերաբերող փոփոխություններ հայտատուի կողմից կատարված չլինելու դեպքում լիազորված մարմնի կողմից որոշում է ընդունվում նոր ժամկետով տեսակի հաստատման մասին սերտիֆիկատ եւ տեսակի նկարագիր տրամադրելու մասին՝ հայտատուի գրավոր դիմումի եւ

փաստաթղթերի լրակազմի հիման վրա: Ընդ որում, օգտագործվում են ստանդարտ նմուշի տեսակի հաստատման համար ավելի վաղ անցկացված փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) արդյունքները:

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի՝ նոր ժամկետով տրամադրումը կատարվում է սույն կարգի 7-րդ կետին համապատասխան:

12. Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատը եւ տեսակի նկարագիրը լրացվում են ռուսերենով, էլեկտրոնային տպիչ սարքերի օգտագործմամբ եւ անդամ պետության օրենսդրության մեջ համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ տեսակի հաստատումն անցկացնող անդամ պետության պետական լեզվով:

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի լրացումը ռուսերենով եւ անդամ պետության պետական լեզվով իրականացվում է տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի տարբեր կողմերում՝ համապատասխանաբար սույն կարգի 15-րդ եւ 16-րդ կետերի համաձայն:

Անհրաժեշտության դեպքում ստանդարտ նմուշի մշակողի եւ պատրաստողի անվանումները եւ ստանդարտ նմուշի տեսակի մասին տեղեկությունները կարող են նշվել լատինական այբուբենի տառերի օգտագործմամբ:

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատը եւ տեսակի նկարագիրը լրացնելու ժամանակ բառերի (բացի ընդունվածներից) հապավումների օգտագործում եւ տեքստի ուղղումներ չեն թույլատրվում:

13. Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատը եւ տեսակի նկարագիրը կորելու կամ վնասվելու դեպքում լիազորված մարմնի կողմից տրվում է կրկնօրինակ: Ընդ որում, տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի կամ տեսակի նկարագրի կրկնօրինակի վերին աջ անկյունում կատարվում է հետեւյալ գրառումը՝ «Կրկնօրինակը տրված է 20 թվականի _____-ին»:

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի մեջ սխալների (վրիպակների) հայտնաբերման դեպքում թույլատրվում է տեսակի հաստատման մասին այդ սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի փոխարինում՝ փոխարինող փաստաթղթի համարի եւ տրման ամսաթվի նշմամբ:

14. Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի բոլոր դաշտերը պետք է լրացվեն (տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի եւ տեսակի նկարագրի բնօրինակներում դաշտերի համարակալումը բացակայում է):

15. Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատում նշվում են՝

ա) 1-ին դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

բ) 2-րդ դաշտում՝ լիազորված մարմնի լրիվ անվանումը.

գ) 3-րդ դաշտում՝ երկու տողով կատարված գրառումներ՝

1-ին տող՝ «ՍԵՐՏԻՖԻԿԱՏ».

2-րդ տող՝ «ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին».

դ) 4-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գրանցման 11-նիշանոց համարը եւ դրա տրման ամսաթիվը:

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գրանցման համարը տառաթվային ծածկագիր է, որի նիշերի յուրաքանչյուր խումբն առանձնանում է կետով եւ ձեւավորվում է հետեւյալ կարգով՝

առաջին եւ երկրորդ նիշեր՝ անդամ պետության 2-նիշանոց տառային ծածկագիրը՝ ISO 3166-1 միջազգային ստանդարտին համապատասխան.

երրորդ նիշ՝ 1-նիշանոց տառային ծածկագիր, որը նույնականացվում է ռուսերեն այբուբենի մեծատառերի հետ եւ ունի հետեւյալ նշանակությունը՝

Շ՝ ստանդարտ նմուշի սերիական արտադրություն.

Է՝ ստանդարտ նմուշի եզակի օրինակ.

չորրորդ եւ հինգերորդ նիշեր՝ 2-նիշանոց թվային ծածկագիր, որը նշանակում է ստանդարտ նմուշի չափագիտական բնութագրերի (պարամետրերի) որոշման հետեւյալ եղանակներից մեկը՝

01՝ անդամ պետությունների մեծությունների միավորների պետական չափանմուշների օգտագործմամբ.

02՝ չափումների վկայագրված մեթոդիկաների (մեթոդների) կիրառմամբ.

03՝ այլ ստանդարտ նմուշի հետ համեմատելու միջոցով.

04՝ միջլաբորատոր փորձարկումների օգտագործմամբ.

05՝ հաշվարկափորձարարական մեթոդի կիրառմամբ.

վեցերորդից իններորդ նիշերը՝ ընթացիկ տարում ձեւակերպված սերտիֆիկատի հերթական համարը, որը հաջորդաբար ձեւավորվում է տարվա սկզբից (0001 համարից).

տասներորդ եւ տասնմեկերորդ նիշերը՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի տրման տարվա թվային 2-նիշանոց ծածկագիրը (նշվում են տարվա վերջին 2 թվերը՝ 00-ից մինչեւ 99):

Տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի ձեւակերպման ամսաթիվը նշվում է բառաթվային եղանակով՝ օրը՝ արաբական երկու թվով (չակերտներում), ամիսը՝ բառով, տարին՝ արաբական չորս թվով (տարվա կրճատ նշումով՝ «թ.»).

ե) 5-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գործողության ժամկետը.

զ) 6-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի տեսակի անվանումը.

է) 7-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի գործարանային համարը (նշվում է ստանդարտ նմուշի եզակի օրինակի կամ ստանդարտ նմուշների խմբաքանակի համար, սերիական թողարկման ստանդարտ նմուշների համար դրվում է գիծ).

ը) 8-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշ պատրաստողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպէս անհատ

ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը.

թ) 9-րդ դաշտում՝ անդամ պետության չափումների միասնականության ապահովման ոլորտի տեղեկատվական ֆոնդում առկա՝ ստանդարտ նմուշի տեսակի գրանցման համարը.

ժ) 10-րդ դաշտում՝ լիազորված մարմնի ակտի համարը եւ դրա ընդունման ամսաթիվը (առկայության դեպքում).

ժա) 11-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատը տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)՝ այդ լիազորված մարմնի կնիքով վավերացված (առկայության դեպքում).

ժբ) 12-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի ձեւաթղթի՝ պատրաստման ժամանակ դրա վրա դրված տպագրական համարը (սերիան եւ հերթական համարը):

16. Տեսակի նկարագրի մեջ նշվում են՝

ա) 1-ին դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ».

բ) 2-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատ տրամադրած լիազորված մարմնի լրիվ անվանումը.

գ) 3-րդ դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՏԵՍԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ».

դ) 4-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի տեսակի լրիվ անվանումը՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատին համապատասխան.

ե) 5-րդ դաշտում՝ մեկ տողով կատարված գրառում՝

«ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի».

զ) 6-րդ դաշտում՝ տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի գրանցման 11-նիշանոց համարը եւ դրա տրման ամսաթիվը.

է) 7-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի նշանակությունը՝ նշելով այն չափումների (փորձարկումների) մեթոդիկաները (մեթոդները), չափման միջոցները, որոնց համար առաջարկվում է կիրառել ստանդարտ նմուշներ, այն արտադրության ոլորտը եւ արդյունաբերության ճյուղը, որտեղ առավելապես պետք է ստանդարտ նմուշ կիրառել.

ը) 8-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի նկարագրությունը՝ նշելով դրա ձեւը, չափերը, ագրեգատային վիճակը, այն նյութը, որից դա պատրաստվել է, ստանդարտ նմուշի բաժնեծրարման բնութագիրը, ստանդարտ նմուշների օրինակների քանակը լրակազմում, ստանդարտ նմուշ պատրաստողի կողմից նշվող լրացուցիչ տեղեկությունները (առկայության դեպքում).

թ) 9-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի թողարկման ձեւը (հատերով, սերիական, անընդմեջ արտադրություն կամ կրկնվող խմբաքանակներով արտադրություն).

ժ) 10-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի չափագիտական բնութագրերը (պարամետրերը) (ստանդարտ նմուշի չափագիտական բնութագրերի (պարամետրերի) անվանումը, թույլատրելի արժեքների սխալանքի միջակայքը, թույլատրելի արժեքների սխալանքի եւ (կամ) ընդլայնված անորոշության արժեքի սահմանները).

ժա) 11-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի օրինակի պիտանիության ժամկետը կամ ստանդարտ նմուշի չափագիտական բնութագրերի (պարամետրերի) ստուգումների անցկացման պարբերականությունը.

ժբ) 12-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի տեսակի հաստատման նշանի տեղը եւ գծանշման եղանակը, որը նախատեսված է այն անդամ պետության օրենսդրությամբ, որի լիազորված մարմնի կողմից անցկացվել է տեսակի հաստատում.

ժգ) 13-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի լրակազմությունը՝ հետեւյալի նշմամբ.

ստանդարտ նմուշի փաթեթվածքի լրակազմությունը (օրինակների քանակը),

պիտակով փաթեթվածքի տեսակը, որով ստանդարտ նմուշը մատակարարվում է սպառողին,

ստանդարտ նմուշի անձնագիրը եւ այլ շահագործման փաստաթղթերի ցանկը.

ժդ) 14-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի նկատմամբ պահանջներ սահմանող փաստաթղթեր, ներառյալ՝

այն տեխնիկական փաստաթղթի անվանումը եւ նշագիրը, որի համաձայն թողարկվում է ստանդարտ նմուշը (տեխնիկական առաջադրանք եւ (կամ) տեխնիկական պայմաններ).

ստանդարտ նմուշի փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) ծրագիրը.

ստանդարտ նմուշի կիրառումը սահմանող փաստաթղթերի անվանումը եւ նշագիրը.

ստուգիչ սխեմայի վերաբերյալ փաստաթղթի անվանումը եւ նշագիրը (առկայության դեպքում).

ստանդարտ նմուշի վերաբերյալ փաստաթղթերի թարմացման պարբերականությունը.

ժե) 15-րդ դաշտում՝ փորձարկումների (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումների) համար ներկայացված ստանդարտ նմուշների օրինակի (խմբաքանակի) համարը եւ թողարկման ամսաթիվը.

ժզ) 16-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշ մշակողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ

ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)։

Ժէ) 17-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշ պատրաստողի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)։

Ժը) 18-րդ դաշտում՝ հայտատուի անվանումը, իրավաբանական անձի գտնվելու վայրը (հասցեն) կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում), բնակության վայրը, ինչպես նաեւ հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)։

Ժթ) 19-րդ դաշտում՝ ստանդարտ նմուշի փորձարկումներ (տեսակի հաստատման, վկայագրման, սերտիֆիկացման նպատակով փորձարկումներ) անցկացնող անդամ պետության փորձարկման կենտրոնի (լիազորված կազմակերպության) անվանումը, դրա գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսի եւ ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), հավատարմագրման վկայագրի համարը ու գործողության ժամկետը կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ լիազորելու մասին փաստաթղթի անվանումը եւ հրապարակման ամսաթիվը։

ի) 20-րդ դաշտում՝ տեսակի նկարագիր տրամադրած լիազորված մարմնի ղեկավարի (լիազորված անձի) պաշտոնը, ստորագրությունը, ազգանունը, անունը, հայրանունը (առկայության դեպքում)՝ այդ լիազորված մարմնի կնիքով վավերացված (առկայության դեպքում)։

իա) 21-րդ դաշտում՝ տեսակի նկարագրի թերթիկի համարը եւ թերթիկների ընդհանուր քանակը (նշվում է յուրաքանչյուր էջի վերջում)։

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Ստանդարտ նմուշի տեսակի
հաստատման կարգի

ՁեՎ

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1)

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի լրիվ անվանումը) (2)

ՄԵՐՏԻՖԻԿԱՏ (3)

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին

թիվ _____ «___» _____ թ. (4)

Գործողության ժամկետը մինչև _____ թվականի _____ «___»-ը (5)

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՏԵՍԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____ (6)

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____ (7)

ՊԱՏՐԱՍՏՈՂԸ _____ (8)

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐԸ _____ (9)

Ստանդարտ նմուշի տեսակը հաստատվել է Եվրասիական տնտեսական միության (10)
անդամ պետության չափումների միասնականության ապահովման ոլորտում
լիազորված մարմնի _____ թվականի _____ «___»-ի թիվ _____ ակտով (նշվում է
համապատասխան ակտի առկայության դեպքում): Ստանդարտ նմուշի տեսակը

թույլատրվում է կիրառել Եվրասիական տնտեսական միության տարածքում՝ ստանդարտ նմուշի տեսակի նկարագրին համապատասխան:

_____ Կ.Տ. _____ (11)
(Եվրասիական տնտեսական միության անդամ (ստորագրություն) (Ա.Ա.Հ.)
պետության լիազորված մարմնի ղեկավարի
(լիազորված անձի) պաշտոնը)

Սերիա _____ թիվ _____ (12)

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Ստանդարտ նմուշի տեսակի
հաստատման կարգի

ՁԵՎ

ստանդարտ նմուշի տեսակի նկարագրի

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (1)

(2)

(Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմնի լրիվ անվանումը)

ՍՏԱՆԴԱՐՏ ՆՄՈՒՇԻ ՏԵՍԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ (3)

(4)

(ստանդարտ նմուշի տեսակի լրիվ անվանումը)

ստանդարտ նմուշի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի (5)

թիվ _____ «_____» _____թ. (6)

Նշանակությունը _____ (7)

Նկարագիրը _____ (8)

Թողարկման ձևը _____ (9)

Չափագիտական բնութագրերը (պարամետրերը) _____ (10)

Օրինակի պիտանիության ժամկետը _____ (11)

Տեսակի հաստատման նշանը _____ (12)

Լրակազմությունը _____ (13)

Պահանջներ սահմանող փաստաթղթերը _____ (14)

Օրինակի (խմբաքանակի) համարը եւ թողարկման ամսաթիվը _____ (15)

Մշակողը _____ (16)

Պատրաստողը _____ (17)

Հայտատուն _____ (18)

Փորձարկման կենտրոնը (լիազորված կազմակերպությունը) _____ (19)

_____ Կ.Տ. _____ (20)
(Եվրասիական տնտեսական միության անդամ (ստորագրություն) (Ս.Ա.Հ.)
պետության լիազորված մարմնի ղեկավարի
(լիազորված անձի) պաշտոնը)

Թերթ _____, ընդամենը թերթեր _____ (21)